

Պ Ա Տ Գ Ա Մ Ա Բ Ե Ր Ը

Ե Ր Ա Ջ

Թեկերը հեն մեկն ունեցանք տուն մը փափրկի,
Նոր Ամասեայ մէջ, այգիով շրջապատուած,
Եւ ինձ քրտի որ ես նարեմ՝ կարօտաբազ,
Կը վերապրիմ եին զըրոյցները գեղեցիկ:

Ու զարդարուի չքնաղ հաթաի նման դարձեալ,
Տերվեմտի լոյս այգիներու կեռասներին,
Ու երազի մը դիւքանքին մէջ հոգեզմայլ՝
Վերագտնենք հոն Զովադիրն ու Ճըզդերին...

Ու երբ տըզայ մը վազելով իջնէ ճամբէն
Դեպի աղբիւրը մեր բակին մէջ կարկաշում,
Կարծեմ թէ ե՛ս նոյն տըզան արեւադէմ
Որուն ծանօթ էին ամէն ծառ եւ քոչում...

Եւ ճըմեռն ալ մըրըրկաթու ճիւղին մէջէն
Պատմեմ քեզի սիրոյ հե՛հեաթն իմ խեղճ սրտին
Որ եփրատի ափերուն մէջ մանուկ տոնեմ
Գանձ մը զըտու ու գայն պահեց մինչեւ շիրիւ...

ՀԱՅՐԵՆԻ ԶՄԵՌ

Հոն այսպէս ցուրտ պիտի չըլլայ, այսպէս ճըմեռ
Առանց ձիւնի. հի՛ն ըսպիտակ ուրախութիւն,
Պիտի տեսնենք որ հազեր են առաւօտուն
Ծառ ու տանիք շուշանքայր պատմութեաներ...

Լուռ ճամբաներն երա՛զ պիտի քրտին մեզի
Որ աւագէն յոգնած աչքեր ունինք այսօր.

Ի՛նչ փոյթ երկինքն այսօր կապոյտ, այսօր
ամառայր,
Երբ մեր սրտէն պոստը արքունի դեռ կը հասի...

Հոն կուրծքիս վրայ պիտի սեղմեմ քեզ որ տաքնաս,
Ո՛չ իմ շունչէս միայն, այլ նոյն իսկ արեւէն
Որ կը քըւէր իր կարօտով ընդմիշտ անհաս...

Զիւնին մէջէն պիտի տանիմ քեզ շա՛տ հեռուն,
Զերդ յարուցեալ մ'իր պատանքին մէջ հըրեղէն,
Հայրենավառ նոր գարունի մը վարդերուն...

Բ Ա Ր Տ Ի

Հըզոր բարտի լուսապրտակ տերեւներով,
Նետի նման բարձրասլաց հաղին արտէն,
Հագար սգի կարծես ճու մէջըդ կը պարեն
Անցնող հովին հետ բամբիռներ հնչեցնելով:

Դուն կը հըսկես ճամբուն եզերքը մեկուսի,
Ու կը նայիս կայտարդաշող ապագային,
Անպերուն տակ անձրեւը քոյր կ'ըլլայ քեզի,
Արեւը քեզ կ'ըլլայ եղբայր ամառնային:

Ու գիտես որ ըստուերիդ մէջ ահա՛ կուգամ
Բանաստեղծի մըտորումները հաղորդել.
Եւ դուն հոգոյս կը շղթայես ամէն ամառ
Սիրոյ չքնաղ հե՛հեաթներու կապն ունեցել:

Որովհետեւ քո մէջդ անշուշտ կը բընակի
Գաղտնի օգին օր ինձ յուշեց երգերս ամէն,
Տըւաւ հովին բամբիռներուն ճայնը ոսկի,
Եւ արբեցաւ ջութերուն փայլըր օրօրէն...:

ՀՐԱՇԱԽ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ես որ այնքան երկիր տեսայ եւ ֆազմենք
 ըստմէջեի
 Իտալական երկնքին տակ, աշնան ազաւո՛ր
 եղանակով,
 Ամալֆիէն անցայ իրկում մը հոգիով ամբշալի,
 Ու կը յիշեն դեռ իմ աչքերըս վեներտիկը

ճիւնաթով:

Լուսահեղեղ Փարիզէն վերջ Լեմանի լիճը գիւ
 գըտաւ
 Նոյն ուղեւորը մըտորում. յետոյ Իսիս
 աստուածուհին
 Զիս պարուրեց իր աքեւին շողերուն մէջ, երբոր
 տակաւ
 Կեանքը սրտէս կը խաւափէր, կեանքը որուն
 սուրբ ազրիւրին

Ծառան եմ դեռ. մոռցած այլեւս, հեռաւոր
 գեղեցկութիւն,
 Ամէն երկնքի մը յաւիտեան չըլտեցաւ իմ հագիւս,
 Այսօր անա՛րա՛ց եմ դռներն Երեւանի առաւօտուն,
 Ազօթարանը հայրենի կարօտածայն կը կանչէ գիւ:

Հողին մէջէն ծայներ կուգան, ազրիւրներն
 կուգան ծայներ,
 Եւ ծառերէն ու հովերէն ու փայերէն ծայնե՛ր
 ամուսն.
 Ուրեմն ինչ որ կ'երագէի հայրենաբաղձ՝ այս
 երկի՛րն էր,
 Արիւնավառ եւ հրաշալի գեղեցկութիւնը
 վարդերուն...

Եւ այս տըղաքը թըխաղէմ, այս աղջիկները
 հայրենի,
 Եւ այս ուղին զո՛ր ճշմարիտ հայրենիքին
 կ'առաջնորդէր.
 Ուրեմն ես իր գաւազն եմ, հոգիս իրմո՛վ
 կը վերածննդ,
 Ու գիւնիէն ուրախութեանն իր արքեմա՛լը կը
 գգայ դեռ...

Ես որ այնքան երկիր տեսայ եւ ֆազմենք
 ըստմէջեի,
 Իտալական երկնքին տակ աշնան տակ եղանակով.
 Երեւանէն այսօր կ'անցնիմ միշտ հոգիով ամբշալի,
 Ու մոռցած եմ վաղուց աչքերըս վեներտիկը
 ճիւնաթով...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՆՔ